ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
«ԼԵՌՆԱՆՑՔԻ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2024-2029թթ

# ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ
# ԱՆԻ ԺԻՐԱՅՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**Զարգացման ծրագրի բովանդակությունը**


**1. Հաստատության գործունեությունը………………………………………………………………2**
**2. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր…………………………………………14**
2.1 Հաստատության շենքային պայմանները………………………………………………………14
2.2 Հաստատության նյութատեխնիկական բազան……………………………………………15
2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները………………………15
2.4 Հաստատության համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ………………………………………………18
2.5 Հաստատության ուսումնական միջավայրը……………………………………………………19
2.6 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ……………………………………………………………………………………21
2.7 Հաստատության տրամադրած կրթության որակը…………………………………… 21
2.8 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները……………………………………………………………………………24
2.9 Աշխատակազմի արժևորման ,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն………………………………………………………………………………24
2.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերը ……………………………………………26
2.9 Հաստատությունում առկա հիմնախնդիրներ……………………………………………………27
**3-8. Նպատակների և խնդիրների սահմանումը:**
**Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, ակնկալվող արդյունքը, արդյունքների գնահատման չափանիշները ,պատասխանատու ները,գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ռիսկերը(** տես ըստ ոլորտների**)**
Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան……………………………29
Ոլորտ 2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ………………………………………………34
Ոլորտ 3. Մանկավարժական համակազմ…………………………………………………………………37
Ոլորտ 4. Աշակերտական համակազմը……………………………………………………………………42
Ոլորտ 5. Ծնողական համակազմ……………………………………………………………………………46
Ոլորտ 6. Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ…………………………………………………48
Ոլորտ 7. Ուսումնական միջավայր…………………………………………………………………………51
Ոլորտ 8. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների …………………56
Ոլորտ 9. Տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները………………………………………59
**9. Վերահսկողության մեխանիզմներ…………………………………………………………………62**

# Հաստատության գործունեությունը

«ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի Մեսրոպ Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որն իր գործառույթներն իրականացնելիս ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Պետությունը վերջին տարիներին արմատական փոփոխությունների գնաց հանրակրթության ոլորտում տարբեր ուղղություններով. բովանդակային մասով, դպրոցներին տրվեց ինքնավարություն, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը ընդլայնվեց, ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգը ենթարկվեց փոփոխության, ինչպես նաև կառավարման համակարգի ձևափոխություն եղավ:

Այս ամենը թելադրում է զարգացման ծրագրի բովանդակությունը:

Դպրոցը նպատակ ունի սովորողի համար դառնալու այն վայրը, որտեղ նա իրեն լավ է զգում, հարմարավետ պայմաններ կան կենսագործունեության համար, որտեղ հետաքրքիր է բոլորին: Յուրաքանչյուր աշակերտ ամեն դասից հետո պետք է նոր հմտություն ձեռք բերի կամ բարելավի այն, ինչ մինչ այդ չէր կարող անել: Հետևաբար շատ կարևոր է դպրոցի զարգացման ծրագրի ճիշտ, նպատակային պլանավորումը: Դպրոցը պետք է ունենա զարգացման առնվազն հինգ տարվա տեսլականը և գտնվի անընդհատ ինքնակատարելագործման գործընթացի մեջ:

Զագացման ծրագրիրը կազմվել է ՝հաշվի առնելով պետության պատվերը դպրոցին՝ այն է՝ կրթել այնպիսի քաղաքացի, որ ոչ միայն գտնի իր տեղը կյանքում, լինի կարողունակ՝ զինված գիտելիքներով, հմտություններով, ունենա հստակ արժեքներ և դիրքորոշումներ, այլև դրանով իսկ նպաստի երկրի զարգացմանը, գիտակցի երկրի շահերի առաջնահերթությունը, ազգային ինքնության, մշակույթի ճանաչողության պահպանման և զարգացման խնդիրները: Սրան զուգահեռ նաև լինի աշխարհի քաղաքացի՝ դաստիարակված մարդասիրական ոգով, բազմակողմանի զարգացած: Այդ քաղաքացին այլևս կլինի մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ, ժամանակակից մարտահրավերները հաղթահարող, ինքնավստահ և կոմպետենտ անձ:

Զարգացման ծրագիրը կազմվել է նաև բազմակարծիք, մասնակցային եղանակով. հիմքում դպրոցի խորհրդակցական մարմինների վեր հանած կրթական կարիքներն են:

Դպրոցի գործունեությունը ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում.

- ✓ **կառավարում**.ուղղված է սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանը, դրանց բավարարմանն ուղղված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակմանն ու արդյունավետ իրագործմանը,
- ✓ **ուսումնադաստիարակչական աշխատանքներ**. համարվում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են մանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր հարցերի շուրջ,
- ✓ **վարչատնտեսական գործունեություն**. ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝ դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման հիման վրա:

**Ժամանակակից դպրոցից պահանջվում է**

- սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ
- ձևավորել կարողունակ քաղաքացի
- ձևավորել սովորող և սովորեցնող անձ
- սովորողների մեջ ձևավորել այնպիսի որակներ, որոնք կնպաստեն սովորողների շարունակական զարգացմանը
- ստեղծել նպաստավոր պայմաններ նախագծային և հոտազոտական գործունեության համար
- նպաստել սովորողների ինքնաճանաչմանը
- երաշխավորել սովորողների ազատությունը
- հաշնի առնել սովորողների նախասիրություններն ու կարողությունները

**Դպրոցը բավարարում է հետևյալ կրթական կարիքները**

Դպրոցը նախատեսված է 238 աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները՝ ըստ լիցենզիայի

- նախադպրոցական կրթական ծրագիր՝ ավագ նախադպրոցական տարիքային փուլ՝ 18 տեղ
- տարրական հանրակրթական՝ 65 տեղ
- հիմնական հանրակրթական՝ 90 տեղ
- միջնակարգ հանրակրթական՝ 65 տեղ

**Զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողների հետևյալ կրթական կարիքները**

- հայրենասեր և ազգասեր
- կարողունակ
- բազմակողմանի զարգացած
- սեփական դիրքորոշում ունեցող
- համամարդկային արժեքներ կրող
- մասնագիտորեն կողմնորոշված
- մրցունակ
- արդի մարտահրավերներն ընդունող

**Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին:**

**Ըստ «Հանրակրթության մասին» օրենքի**

1.Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

2.1. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

3. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

Ըստ զարգացման ծրագրի՝ դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, մարդկային արժանապատվության պահպանմանը, իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Կարևորված է համայնքի ակտիվ համագործակցության ապահովումը, ինչը դպրոցը կդարձնի համայնքի սոցիալ-մշակութային, տեղեկատվական- ռեսուրսային կենտրոն:

## Դպրոցի ենթակառուցվածքներն ու հնարավորությունները

Դպրոցի հիմնադիրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության: Դպրոցը տիպային է, բաղկացած 2 մասնաշենքից: Ունի վարչական աշխատասենյակ, ուսուցչանոց, համակարգչային դասասենյակ, «Շախմատ» առարկայի դասասենյակ, ՆԶՊ առարկայի դասասենյակ, սպորտհրապարակ, հանդիսությունների դահլիճ, արհեստանոց, խոհանոց, ճաշարան, սննդի պահեստ,«Արմաթ» լաբորատորիա, սանհանգույց, գրադարան, համացանցի առկայություն, տեսախցիկներ:

| Շենքային պայմանները | Քանակը | Ընդհանուր մակերեսը/մ$^2$ | Փաստացի վիճակը |
|---|---|---|---|
| Երկհարկանի 2 մասնաշենք | 2 մասն/շ | 1800 | բավ |
| Դասասենյակ | 12 | 372 | բավ |
| Գրադարան | 1 | 25 | բավ |
| Համակարգչային սենյակ | 1 | 42,3 | բավ |
| ՈՒսուցչանոց | 1 | 46,7 | Լավ |
| Տնօրենի կաբինետ | 1 | 30 | լավ |
| հաշվապահություն | 1 | 15 | բավ |
| Արմաթ ինժիներական լաբորատորիա | 1 | 28 | լավ |
| Շախմատի սենյակ | 1 | 27 | բավ |
| Առանձնասենյակներ | 6 | 91,6 | բավ |
| Խոհանոց | 1 | 22 | լավ |
| Ճաշասենյակ | 1 | 32 | լավ |
| Սննդի պահեստ | 1 | 17 | լավ |
| Սանհանգույցներ | 2 | 30 | լավ |
| Ռազմագիտության կաբինետ | 1 | 37 | լավ |
| Հանդիսությունների դահլիճ | 1 | 70 | բավ |
| Գույքի պահեստ | 1 | 15 | բավ |
| Արհեստանոց | 1 | 16 | բավ |
| Նախակրթարան | 2 | 71,6 | լավ |

| Գույք,սարքավորումներ | Քանակը | Վիճակը |
|---|---|---|
| Աշակերտական սեղան | 163 | 115բավ,48 լավ |
| Աշակերտական աթոռ | 300 | 204 բավ., 96 լավ |
| Գրասեղան | 6 | 6բավ |
| Թենիսի սեղան | 1 | բավ. |
| Գրատախտակ | 24 | 24 Բավ. |
| Լվացարան ծորակով սեղան | 8 | բավ. |
| Ուսուցչական սեղան | 26 | 26 բավ |
| ՈՒսուցչական աթոռ | 60 | 48 բավ, 12 լավ |
| Ճաշարանի սեղան հարմարեցված | 6 | 6 բավ |
| Ճաշարանի աթոռ հարմարեցված | 24 | 24 բավ |
| Պահարան | 32 | 3 2 բավ, |
| ՈՒսումնական համակարգիչ | 7 | 7 բավ |
| Աշխատանքային համակարգիչ | 4 | 4 բավ |
| Համակարգչային սեղան | 6 | 3 բավ,3լավ |
| Երկաթյա պահարան | 3 | 3 բավ |
| Փափուկ կահույք 4 կտոր | 1 | բավ |
| Պրոյեկտոր | 1 | բավ |
| Նոթբուք | 1 | 1բավ |
| Սառնարան, սառցարան | 2 | 2 լավ |
| Գազօջախ | 1 | 1լավ |
| Ջեռուցման կաթսա | 3 | 3 բավ |
| Ջրատաքացուցիչ | 1 | 1 բավ |
| Տպիչ սարքեր | 2 | 2 բավ |
| Սկաներ տպիչ | 1 | 1 բավ |
| Տարական դաս. շախմատի գույք | 12 կոմպլեկտ | բավ |
| Արևային կայան | 20 կվտ | լավ |

**Մարդկային ռեսուրսներ**

Դպրոցն ունի թվով 36 աշխատակից, որոնցից 28-ը մանկավարժ, բարձրագույն մասնագիտական որակավորմամբ՝ 26, միջին մասնագիտական որակավորմամբ՝ 2, կամավոր ատեստավորված ՝ 4 ուսուցիչ, առաջին աստիճանի տարակարգով՝ 1 ուսուցիչ:

| N | **Մարդկային ռեսուրսներ** | քանակ |
|---|---|---|
| 1 | Ուսուցիչների ընդհանուր թիվ | 23 |
| 2 | Վարչական աշխատողներ | 4 |
| 3 | Սովորողների թիվ | 164 |
| 4 | Բարձրագույն կրթության ուսուցիչներ | 22 |
| 5 | Միջին մասնագիտական որակավորմամբ ուսուցիչներ | 1 |
| 6 | Ուսուցչի օգնականներ | 1 |
| 7 | Կամավոր ատեստավորված ուսուցիչներ | 4 կին |
| 8 | Առարկայական մեթոդմիավորումներ | 4 |
| 9 | Ուսումնաօժանդակ անձնակազմը | 6 |
| 10 | Հաշվապահ | 1 |
| 11 | Գործավար | 1 |
| 12 | Գրադարանավար | 1 |
| | | |
| | | |

Մանկավարժական աշխատողներ

| Մանկավարժական հաստիքի անվանումը | Հաստիքի թիվը |
|---|---|
| Տնօրեն | 1 |
| Տնօրենի տեղակալ | 0,75 |
| Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող (ՄԿԱԳՀ) | 0,75 |
| Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող(ՍԴԱՀ) | 0,75 |
| Զինղեկ և քաղպաշտպանություն | 1,3 |
| Ուսուցիչներ | 16,5 |
| Ուսուցչի օգնական. | 1 |
| Դաստիարակ | 0.5 |
| Լաբորանտ | 0,5 |
| Էլեկտրոնային կառավարման և դասավանդման | 0,5 |

| | |
|---|---|
| ապահովման մասնագետ | |
| Հոգեբան | 0.75 |
| Գրադարանավար | 1 |
| | |

# ՈՒսումնաօժանդակ անձնակազմ

| | |
|---|---|
| Վարչատնտեսական համակարգող | 1 |
| Հաշվապահ | 1 |
| Գործավար (անձնակազմի կառավարման մասնագետ) | 1 |
| Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ | 0.75 |
| Հավաքարար | 2 |
| Պահակ | 3 |
| Այգեպան | 1 |
| Խոհարար | 1 |
| | |
| | |

**Խորհրդակցական մարմիններ**

Ըստ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության» ՊՈԱԿ –ի օրինակելի կանոնադրության՝

Դպրոցում ձևավորված են և արդյունավետ գործում են դպրոցի կառավարման խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, ծնողական և աշակերտական խորհուրդները, առարկայական մեթոդական միավորումները: Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց աշխատանքային ծրագիրը, կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը:

Դպրոցի կառավարման խորհուրդը միացյալ խորհուրդ է, աշխատանքներ է կազմակերպում իր աշխատակարգի համաձայն՝ պարբերաբար քննարկումներ իրականացնելով դպրոցի ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության, ինչպես նաև կանոնադրությամբ իրեն վերապահված այլ գործառույթների վերաբերյալ( ներքին և արտաքին գնահատման արդյունքներ և այլն):

Կառավարման խորհուրդի և տնօրենի համագործակցությունը պետք է առավել սերտ լինի, քանի որ խորհրդի ճիշտ և հետևողական աշխատանքի շնորհիվ է, ու կապահավվի ՈՒԴ գործընթացի ճիշտ, նպատակային և արդյունավետ իրագործումը:

**Ծնողական խորհուրդը** կատարում է իր պարտականությունները՝ կանոնադրությամբ իրեն վերագրված լիազորությունների շրջանակներում: Ծնողխորհուրդը պարբերաբար ծանոթանում է ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքին, սովորողների կիսամյակային և տարեկան առաջադիմությանը, կազմակերպում է տարբեր միջոցառումներ, կարևորում է երեխաների իրավունքների պաշտպանությունը դպրոցում: Առաջիկայում ակնկալվում է ծնողխորհրդի աշխատանքների առավել ակտիվացում՝ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ համագործակցելու միջոցով:

**Աշակերտական խորհուրդն** իր մասնախմբերի միջոցով ակտիվ մասնակցություն է ցուցաբերում դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, նաև օգնում է տնօրենությանը դպրոցի շրջակայքի բարեկարգման, կանաչապատման աշխատանքներում, շաբաթօրյակների անցկացման ժամանակ:

Դպրոցի **մանկավարժական կոլեկտիվը** նվիրված մանկավարժների խումբ է, որի նպատակը սովորողին ճիշտ դաստիարակություն և օգտակար գիտելիք տալն է:

Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար խորհրդակցություններ են հրավիրվում **մեթոդմիավորումների** անդամների մասնակցությամբ: Նիստերի ժամանակ քննարկվում են մեթոդմիավորման փաստաթղթերի վարման կարգը, մեթոդմիավորման ուսուցիչների հետ աշխատանքի հիմնական ուղղությունները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները և առանձին առարկաների դասավանդման, գիտելիքի ստուգման, գնահատման չափանիշների, հարցաշարերի կազմման սկզբունքներին առնչվող և բազմաթիվ այլ հարցեր:

Կրթական գործընթացի ուսումնամեթոդական ապահովումը դպրոցում դրված է ամուր հիմքերի վրա: Դպրոցի մեթոդմիավորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի ճիշտ ռազմավարության ընտրությունն է, ուսումնադաստիարակչական գործընթացի, դասավանդման ընթացիկ վիճակի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի արդյունավետության վերլուծությունը և այլն: Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջների և պետական ծրագրերի կատարումը:

Միասնական նպատակների ուսուցման և դաստիարակության համար մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները ունեն և կշարունակեն ունենանալ ցուցակներ՝

- Սոցիալական աջակցություններից օգտվող աշակերտների,
- նյութապես անապահով աշակերտների,
- միակողմանի ծնողազուրկ աշակերտների,
- ծնողական խնամքից զրկված աշակերտների,
- միայնակ մոր/հոր խնամքի տակ գտնվող աշակերտների,
- հաշմանդամություն ունեցող աշակերտների,

Ձեռքի տակ ունենալով այս կարևոր տեղեկատվությունը՝ առանձին կառույցների, դրանց ներկայացուցիչների միջոցով կբարելավվեն աշակերտների սոցիալական պայմանները, որից և շատ հաճախ կախված է աշակերտների ուսուցման և դաստիարակության գործը: Այս աշխատանքներում դպրոցը կհամագործակցի նաև համայնքի հետ: Կզարգանան աշակերտ-ծնող, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-համայնք-դպրոց հարաբերությունները: Կկազմակերպվեն հանդիպումներ համայնքի ղեկավարի, ավագանու, հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների հետ: Այդ համագործակցությունը կբխի աշակերտի շահերից: Ճշմարտություն է, որ դպրոցը չի կարող լուծել իր առջև ծառացած խնդիրները, որքան էլ ունակ ու պատրաստ լինի, եթե միայնակ է: Կվերանա դպրոց-հասարակություն միջնապատը: Սովորողն ու մանկավարժը կներառվեն հասարակության կյանքում՝ դրանով իսկ բարձրացնելով դպրոցի հեղինակությունը:

Ցանկացած կրթական համակարգ պետք է համախմբի կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչ, աշակերտ, ծնող) ներուժը և ստեղծի նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի, համայնքի, այնպես էլ ազգային մակարդակում:

Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, Լոռու մարզպետարանի, Սպիտակի համայնքապետարանի, Լեռնանցք վարչական շրջանի աշխատակազմի, ԿԳՄՍՆ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, իրավապահ մարմինների , մշակութային օջախների, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:

Իրավապահ մարմինների ներկայացուցիչների, տնօրենի, տնօրենի տեղակալի, ՄԿԱԳՀ-ի, խորհրդակցական մարմինների անդամների, դասղեկների կողմից հետևողական աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և պարտականությունների ներկայացման և արդյունավետ իրացման ուղղությամբ. կազմակերպվում են առանձին հանդիպում- քննարկումներ, որոնց շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում հալածանքի (այդ թվում՝ մեդիայի միջոցով), օտարման և բռնության դրսևորումների բացառմանը:

Չնայած սովորողների բարձր առաջադիմությանը՝ դպրոցի առաջ խնդիր է դրված բարձրացնելու սովորողների ուսման որակը (ցուցանիշները՝ տոկոսով)




Դպրոցն աչքի է ընկնում  բուհ ընդունվողների բարձր ցուցանիշով: Յուրաքանչյուր տարի շրջանավարտների շուրջ 50% -ը ընդունվում են բուհ:



## Բյուջետային հնարավորությունները

Դպրոցի ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեի հատկացումներն են, որոնցից էլ ձևավորվում են դպրոցի բյուջեի ծախսերը հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
2. Եկամտահարկի վճարումներ
3. Գրասենյակային և տնտեսական ծախսեր
4. Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
5. Էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսեր
6. Կոմունալ ծառայությունների վճարումներ
7. Կապիտալ ծախսեր
8. Այլ ծախսեր

## Դպրոցի ֆինանսական ցուցանիշներն ըստ տարիների



**Դպրոցի բյուջեի ծախսերն ըստ ոլորտների. 2022թ (տոկոսներով)**



## 2.Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար, ուսումնասիրելով դպրոցի մասին եղած ինֆորմացիան, բացահայտել եմ դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու խոչընդոտները, ռիսկերը․

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| **Դպրոցի շենքային պայմանները** | |
| ▪Դպրոցը տիպային է 1800 քառ.մ տարածքով,գտնվում է գյուղի կենտրոնում,կազմված է 2 մասնաշենքից, երկհարկանի է ,հարմար է ծայրամասերում ապրող աշակերտների և աշխատակիցների համար,ունի նկուղ ցանկապատված է: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989<br>▪Դպրոցի 12 դասասենյակները մեծ են լուսավոր,վերանորոգված<br>▪:https://www.arlis.am/documentview.aspx?docid=119212<br><br>Դպրոցն ունի սպորտիրապարակ, հանդիսությունների դահլիճ<br>Վարչական սենյակը, ուսուցչանոցը, դասասենյակները կահավորված են,<br>Դպրոցն ունի ամենօրյա հոսող ջուր,առկա են մշտական ջրով ապահովված թվով 2 վերանորոգված սանհանգույց: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989<br>▪Դպրոցը գազաֆիկացված է,ունի լոկալ ջեռուցման համակարգ, արևային էլեկտրաբլոկներ:<br>▪,https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989<br><br>Արմաթ լաբորատորիա<br>Դպրոցն ունի պահուստային ելքեր<br>Վերանորոգված և կահավորված ճաշարան,սննդի պահեստ<br>Մուտքի մոտ ունի ԿԱՊԿՈՒ սովորողների | 1. Սպորտդահլիճի և հանդերձարանների բացակայություն<br>2. ԿԱՊԿ ունեցող երեխաների համար բացակայում է հարմարեցված սենյակ<br>3. Բակը բարեկարգելու կարիք կա<br>4. Ապաստարանը անմխիթար վիճակում է, կարիք ունի վերանորոգման<br>5. Դահլիճն ունի ձևափոխման կարիք<br>6. Առանձին դասասենյակներ ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք<br>7. Միջանցքներում տեղ-տեղ վերանորոգման կարիք կա |

<table>
<tr><td>կարիքների համար նախատեսված թեքահարթակ:<br><br>Բավարար կահավորված դահլիճ<br>Մշակովի այգի</td><td></td></tr>
<tr><td colspan="2">Դպրոցի նյութատեխնիկական բազան</td></tr>
<tr><td>Դպրոցն ունի համակարգիչներ, նոթբուք, համացանց, «Շախմատ» առարկայի դասասենյակ՝ համապատասխան գույքով, սպորտհրապարակ, դահլիճ, արհեստանոց, խոհանոց՝ անհրաժեշտ սարքավորումներով, տեսախցիկներ, «Արմաթ» լաբորատորիա՝ համապատասխան գույքով, գրադարան:</td><td>Դպրոցը կարիք ունի<br>1. ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների և համապատասխան նյութերի<br>2. ժամանակակից համակարգիչների և Սմարթ էլեկտրոնային գրատախտակով դասասենյակի<br>3. Համացանցի հզորացման<br>4. Մարզագույքի<br>5. Արհեստանոցի համար ժամա նակակից անհրաժեշտ գործիքների<br>6. Գրադարանային ֆոնդի հարստացման, էլեկտրոնային գրադարանի ստեղծման</td></tr>
<tr><td colspan="2">Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները</td></tr>
<tr><td>Գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը խրախուսում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում:<br>Դպրոցի բոլոր խորհրդակցական մարմինները ձևավորվում են օրենքով սահմանված կարգով, նիստերը գումարվում են կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում, արձանագրվում սահմանված ժամկետներում:<br>Կառավարման խորհուրդ (միացյալ)<br>Գործում է իր լիազորությունների սահմանում՝ իրականացնելով դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները .<br>ա. դպրոցների հաստիքացուցակի,</td><td>Կառավարման խորհրդի նախագահը և անդամները չեն մասնակցել ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին:<br><br>Կառավարման խորհրդի գործունեության պասիվություն, նախաձեռնողականության պակաս<br>• Կառավարման խորհրդի նիստերին , զբաղվածությունից ելնելով, լինում են բացակայություններ :<br>Դպրոցի կառավարման գործում ծնողների ներգրավվածության, ակտիվության ցածր մակարդակ :</td></tr>
</table>

| | |
|---|---|
| տարիֆիկացիոն ցուցակի վերաբերյալ քննարկումներ անցկացնելը և հավանություն տալը<br>բ. քննարկում և հաստատում է տարեկան եռամսյակային ծախսերի նախահաշվային նախագծերը՝ հաշվի առնելով ծախսային նախագծերի վերաբերյալ բոլոր կարծիքներն ու առաջարկությունները<br>գ. տարեկան առնվազն երկու անգամ՝ կիսամյակների ավարտին, լսում, քննարկում և հավանության է արժանացնում տնօրենի զեկույցը՝ կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին<br>դ.քննարկում և հաստատում է ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը<br>ե. հաստատում է դպրոցի ներքին կարգապահական կանոնները :<br>Կառավարման խորհրդի նիստերը հրավիրվում են սահմանված ժամկետում և օրակարգով, հրավիրվում են նաև արտահերթ նիստեր՝ ելնելով անհրաժեշտությունից • Կառավարման խորհրդի անդամների և տնօրենների միջև ստեղծված է մասնակցային, հարգալից աշխատանքային միջավայր:<br><br>**Մանկավարժական խորհուրդ**<br>Կազմում դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողներն են , ծնողխորհրդի նախագահը: Այն ձևավորված է 26 անդամից: Փորձառու և որակյալ մասնագետներ կան, այդ է վկայում կամավոր ատեստավորում անցած 4 ուսուցչի առկայությունը, 1 ուսուցիչ էլ ունի առաջին աստիճանի տարակարգ:Մեծ մասը զբաղվում է ինքնակրթությամբ, պարբերաբար մասնակցում վերապատրաստումների և խորհրդակցությունների:<br>Մանկավարժական խորհուրդը քննարկում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և | Կառավարման խորհրդի ոչ բոլոր անդամներն են ակտիվորեն ներգրավված խորհրդի աշխատանքներին:<br><br>•Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ:<br>• Դպրոցի աշակերտական խորհրդի ինքնուրույն նախաձեռնությունների պակաս<br>ՈՒԴ գործընթացի վերահսկողության թերացում:<br><br>Ուսուցիչները պասիվություն են ցուցաբերում մրցույթների նկատմամբ.քիչ թվով ուսուցիչներ են մասնակցում կամավոր ատեստավորման ու տարակարգի բարձրացման:<br><br>Իրազեկված չեն կանոնադրությամբ իրենց վերապահված բոլոր գործառույթներին: |

| | |
|---|---|
| տարեկան հաշվետվությունները: Քննարկում է հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան: Մանկավարժական խորհուրդը քննարկում և վերհանում է առկա խնդիրները, առաջարկում դրանց լուծման ուղիներ: Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով ԿԱՊԿՈւ սովորողների հետ տարվող աշխատանքները, ըստ անհրաժեշտության առաջարկում է վերանայել տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության տեսակները:<br><br>**Ծնողական խորհուրդ**<br>Կազմում դպրոցի բոլոր դասարանական ծնողական խորհուրդների նախագահներն են: Տեղյակ են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներից;<br>Ծնողների ներգրավվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներին կազմակերպվում է մասնակցային մշակույթի սկզբունքներով: Ծնողական խորհուրդը մշտապես աջակցում է արտադասարանական և արտադպրոցա կան միջոցառումների կազմակերպմանը: Ծնողական խորհրդի և տնօրենի միջև հարաբերությունները հիմնված են փոխադարձ վստահության և համագործակցության վրա:<br><br>**Աշակերտական խորհուրդ**<br><br>Կանոնադրությամբ գործող այս խորհուրդը հիմնականում իրականացնում է իր գործառույթները, գիտակցում և գնահատում է ինքնակառավարման կարևորությունը: Աշակերտական խորհրդի հանձնախմբերը ձևավորվում են աշակերտների տարիքային առանձնահատկություններին, | Չկան սովորողների հետաքրքրություններով պայմանավորված, ձևավորված ակումբներ, խմբակներ:<br><br>Պասիվ են առարկայական մրցույթներ, միջոցառումներ կազմակերպելու գործում: |

| | |
|---|---|
| հետաքրքրություններին և կարողություններին համապատասխան: Աշակերտական խորհրդի և դպրոցի տնօրենության միջև ստեղծված է մասնակցայի մշակույթ, որը ապահովում է աշակերտական խորհրդի կողմից իրենց անմիջականորեն վերաբերող հարցերի շուրջ բաց և համագործակցային քննարկումները: Դպրոցի տնօրենի հովանավորչությամբ իրագործվում են սովորողների նախաձեռնությունները:<br><br>**Մեթոդմիավորումներ**<br><br>Դպրոցում գործում է առարկայական 4 մեթոդմիավորում՝<br>• Հումանիտար<br>• Բնագիտական<br>• Դասվարներ<br>• Օտար լեզուներ<br><br>Առարկայական մ/մ-երը սահմանված կարգի համաձայն հրավիրում են նիստեր, քննարկում ուսումնադաստիարակչական տարբեր հարցեր, հանդես գալիս առաջարկություններով : | |
| **Հաստատության համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ** | |
| Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, Լոռու մարզպետարանի,Սպիտակի համայնքապետարանի, Լեռնանցք վարչական շրջանի աշխատակազմի, ԿԳՄՍՆ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, իրավապահ մարմինների , մշակութային օջախների, տարբեր հասարակական կազմակերպությունների հետ: ԿԶՆԱԿ_ի կողմից կազմակերպված «Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» նախագծում դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Վարշամ Հարությունյանը հանդես է եկել | Բավարար մակարդակի վրա չէ համայնքի և մարզի այլ հաստատությունների հետ համագործակցությունը:<br><br>Բացակայում ենմշակույթի գործիչների, մտավորականների, սպորտսմենների այցելությունները դպրոց:<br>Դպրոցում չեն իրականացվում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ, դպրոցն ավարտող սովորղները դեռևս դժվարանում են |

| | |
|---|---|
| հետազոտական աշխատանքով: <br>• Միջազգային մրցույթներում մանկավարժների ներգրավվածություն(անգլերենի ուսուցչուհին) <br>Դպրոցն արդյունավետորեն մասնակցում է Վանաձորի պետական համալսարանի կողմից կազմակերպված մրցույթներին, մասնագիտական տոնավաճառներին և այլ միջոցառումների: <br>Դպրոցի սաները ակտիվ մասնակցություն են ունենում նաև տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումներին; «Սպիտակի երիտասարդների տուն»բաց երիտասարդական կենտրոնի ակտիվ սաներն են դպրոցի 10-րդ դասարանի որոշ սովորողներ, հնարավորություն ունեն մասնակցելու տարբեր խմբակների և զարգացնել իրենց ստեղծագործական ունակությունները: <br>https://fb.watch/peqwhrqsMs/ <br><br>ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրով դպրոցում իրականացվում է տարրական դասարանների «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որտեղ որպես աշխատակիցներ ներգրավված են դպրոցի ծնողները: Ծրագրի շրջանակներում ծնողական համայնքը իր ֆինանսական ներդրումն է ցուցաբերում սովորողներին լրացուցիչ սննդի տրամադրման համար: | կատարել ապագա մասնագիտության ճիշտ ընտրություն: <br>Չնայած ԱԻՆ-ի հետ համագործակցությանը՝ ցածր է սովորողների և անձնակազմի՝ արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու և ճիշտ վարքականոն դրսևորելու, առաջին բուժօգնություն ցուցաբերելու կարողությունը: |

| **Հաստատության ուսումնական միջավայրը** | |
|---|---|
| Դասասենյակները լուսավոր են, կահավորված նոր գույքով, դպրոցում ձևավորված է սովորեցնելու և սովորելու | Նորագույն նյութատեխնիկական բազայով զինված առարկայական |

| | |
|---|---|
| ավանդույթը, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունները առողջ են և օրինակելի:<br>Դպրոցի անձնակազմի և շահառու այլ կողմերի գործուն ներգրավվածությամբ աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ, առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները:<br>Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ մանկավարժական համակազմի ազատ կամաարտահայտության իրավունքները, բացառված են այլակարծությունը սահմանափակող գործոնները:<br>Դպրոցի ողջ անձնակազմի կողմից աշխատանքներ են տարվում դպրոցում բռնության ու հալածանքի (բուլինգ) ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ, սովորողների շրջանում բացատրական աշխատանքներ են տարվում ցանկացած հիմքով (արտաքին տեսքի, սոցիալական դրության, ծնողների կարգավիճակի, ազգային պատկանելիության) խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ:<br>Ապահովված են անձնակազմի առօրյա բնականոն գործունեության համար անհրաժեշտ անվտանգային, առողջապահական, սանիտարահիգիենիկ, հակահամավարակային պայմանները:<br>Մանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը, ուսումնական գործընթացում վերջիններիս լիարժեք ներառումը:<br>Դպրոցում առկա է սովորողների ինքնաարտահայտման ու ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները:<br>Ապահովված են սովորողների առողջության և անվտանգության պահպանման բոլոր նորմերը: | դասարանների, աուդիո-դասարանների բացակայություն<br>ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության կազմակերպման մատչելի միջավայրի և խելամիտ հարմարեցումների բացակայություն,<br>ծառայությունների տրամադրման ցածր մակարդակ<br>Սպորտային և գեղագիտական խմբակների բացակայություն<br>Օլիմպիադաների, տարբեր մրցույթների նախապատրաստելու համար խմբակների բացակայություն<br><br>Հալածանքի և օտարման դեպքեր, անկախ դպրոցի վարած քաղաքականությունից , նկատելի են: |

| Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ | |
|---|---|
| Դպրոցի մանկավարժները պարբերաբար մասնակցում են մասնագիտական աճն ապահովող սեմինարների՝ ստանալով համապատասխան հավաստագրեր: Կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ դպրոցում, փորձի փոխանակում այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ: Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, մեթոդմիավորումները, ակտիվ աշխատում են այս ուղղությամբ՝հանդես գալիս զեկուցումներով և խորհրդատվություններով: Անգլերենի ուսուցչուհին մասնակցում է միջազգային վերապատրաստումների, փորձով կիսվում գործընկերների հետ: Ուսումնական հաստատությունը կառավարվում է կրթության գործում մանկավարժական անձնակազմի դերի արժևորման ու կարևորության գիտակցմամբ: Դպրոցի հնարավորությունների սահմաններում իրականացվում է գործունեության արդյունավետությամբ աչքի ընկած, ինչպես նաև մրցույթներում հաջողության հասած սովորողներ ունեցող ուսուցիչների խրախուսում: Դպրոցում ապահոված են անձնակազմի ինքնակրթության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, խթանվում են տարբեր մրցույթների, վերապատրաստումներին և կամավոր ատեստացիայի մասնակցությունը: | Տարբեր մրցույթների, կամավոր ատեստավորման, տարակարգի բարձրացմանն ուղղված աշխատանքների պասիվություն |
| **Հաստատության տրամադրած կրթության որակը** | |
| • Դպրոցի զարգացման ծրագրի տեսլականից բխող ՈՒԴԱՏ ռազմավարական պլանավորում:<br>. ՈՒԴԱ իրականացման փուլում ընթացիկ կարիքների գնահատում և գործընթացի արդյունավետության բարելավվում ՀՊՉ պահանջներին համապատասխան:<br><br>.Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացը: | .Համակողմանի և տարբեր ձևերով ՈՒԴԱ արդյունավետության գնահատման թերացումներ<br><br>ԿԱՊԿՈՒ սովորողների հետ կապված դանդաղ առաջընթաց<br><br>Օլիմպիադաների մասնակցության ցածր տոկոս |

| | |
|---|---|
| Աշխատանք է կատարվում ուսման որակը բարելավելու , աշակերտների կարողությունների ուղղությամբ:Բոլոր ուսուցիչները ունեն առարկայական թեմատիկ պլաններ, դասարան են մտնում օրվա դասի պլանով, կատարում փոխադարձ դասալսումներ, քննարկումներ, վերլուծություններ:<br>Գործում է ներդպրոցական վերահսկողութ-յուն :<br>Առողջության պահպանման և անվտանգ կենսագործունեության , ռազմահայրենասիրական , հայրենասիրական  և բարոյական դաստիարակության ամրապնդելու ուղղությամբ աշխատանքներ են տարվում: Մանկավարժական անձնակազմը տիրապետում և կիրառում է տարբեր մեթոդներ: Շնորհիվ մանկավարժների կողմից կիրառվող փոխներգործուն մեթոդների և հնարների, աշակերտները ստանում են բավարար գիտելիքներ՝<br>զարգացնելու կոմպետենցիաները,<br>Դպրոցում սովորում է կրթության առանձնահատուկ<br>պայմանների կարիք ունեցող 6 սովորող, ուսուցիչները, համագործակցելով ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմի , ծնողների հետ , ըստ սահմանված կարգի և ժամանակացույցի իրականացնում են ուսուցման գործընթացը:<br><br>Կրթության որակի գնահատումը սովորողի մեջ  կարողունակության զարգացման աստիճանը բնութագրող վերջնարդյունքն է , ըստ ձեռք բերված գիտելիքների և հմտությունների մակարդակի ,<br>ինչպես նաև դիրքորոշումների և արժեքների ձևավորման չափորոշչային պահանջներին համապատասխան :<br><br>Կրթության որակը դպրոցում գնահատվում է հետևյալ չափանիշներով՝<br>• Ուսումնական գործընթացի առկա վիճակը/ | Հանրապետական օլիմպիադաների մասնակցության բացակայություն:<br>Տարեկան առաջադիմության միջինից ցածր որակ<br><br>**2020-2021 ուստարի՝ 31%**<br>**2021-2022 ուստարի՝ 31,46%**<br>**2022-2023 ուստարի՝ 33,5%** |

| | |
|---|---|
| սովորողի կարիքին համապատասխան ուսուցման կազմակերպում<br>• Կրթական գործընթացի կատարողականը մանկավարժական և վարչատնտեսական աշխատակիցների աշխատանքի կազմակերպման հատուկ պլանավորված մեխանիզմների առկայություն<br>• Կրթական գործընթացի արդյունավետությունը / հասարակական կարիքներին համապատասխան կրթության բոլոր մասնակիցների փոխգործակցություն<br>• Ուսումնադաստիարակչական միջոցառումների որակը/ դպրոցական միջոցառումների , խմբակների<br>• նախագծերի իրականացում և կարգապահության արմատավորում<br><br>Դպրոցում ձևավորվել և գործում են «Առողջ ապրելակերպ», «Պատանի բնագետ» խմբակներ:<br><br>Նախագծային աշխատանքներ են կիրականացվում 7-րդ դասարանում, որի համար ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչից նախագծի համար տրամադրվում է տարիֆիկացված ժամաքանակ:<br>Երկարօրյա ուսուցման աշխատանքները ընթացքի մեջ են, ինչը իսկապես կնպաստի կրթության որակի աճին;<br><br>Լուրջ աշխատանքներ են տարվում ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ. 2021- 2022 ուստարվա հետ համեմատած 2022-2023 ուստարում կրթության որակը աճել է շուրջ 2 % _ով:<br>Դպրոցն ունի բավարար հեղինակություն, բարձր հեղինակություն և տարակարգ ունեցող ուսուցիչներ:<br>Բուհերում սովորող դպրոցի շրջանավարտ - ուսանողների թիվը մեծ է:<br>Շրջանավարտները ունեն գնահատելի հաջողություններ: | |
| Չնայած սովորողների բարձր առաջադիմությանը՝ դպրոցի առաջ խնդիր է դրված բարձրացնելու սովորողների ուսման որակը (ցուցանիշները՝ տոկոսով) | |




Դպրոցն աչքի է ընկնում բուհ ընդունվողների բարձր ցուցանիշով: Յուրաքանչյուր տարի
շրջանավարտների շուրջ 50% -ը ընդունվում են բուհ:




**Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները**

| | |
|---|---|
| • Դպրոցն ապահոված է ինտերնետ կապով<br>• Դպրոցում գործում է <<Արմաթ>> լաբորատորիա, ուր հաճախում են սովորողներ տարբեր դասարաններից:<br>2022-2023 ուստարում դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Դարիկ Մելոյանը «Դիջիկոդ-2023» ծրագրավորման մրցույթի մարզային փուլի հաղթողներից է:<br><br>• Դպրոցում մատենավարությունը կատարվում է էլեկտրոնային տարբերակով<br>• Դպրոցն օգտվում է էլեկտրոնային տարբեր կրթական հարթակներից ՝Microsoft TEAMS, Google Classroom և այլն .<br>• Դպրոցն օգտվում է հեռավար ուսուցման նպատակով հավաքված ռեսուրսներից և տեսադասերից՝ lib.armedu.am, e-school.am, heravar.armedu.am և այլն<br>• Դպրոցի ուսուցիչների մի մասը մասնակցել է ԿՏԱԿ-ի կողմից կազմակերպված <<Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ>> վերապատրաստմանը<br>• Դպրոցի կողմից էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram:<br><br>Ուսումնադաստիարակչական գործընթացում մշտապես կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ. տեսադասերի կազմակերպում, ֆիլմերի դիտում, վիրտուալ լաբորատորիաների կիրառում, վիկտորինաների, ինտելեկտուալ զարգացնող խաղերի կազմակերպում: ՏՀՏ տեխնոլոգիաները դասապրոցեսի ընթացքում կիրառվում են նաև միավորային և ձևավորող գնահատում իրականացնելու նպատակով: Դպրոցի ողջ | Ժամանակակից կրթական պահանջները բավարարող ուսումնական թերի միջավայր , ժամանակակից սարքավորումների, ՏՀՏ –ի անբավարար քանակ և վիճակ,<br><br>SMART դասասենյակի բացակայություն<br><br>. Համակարգիչների և համակարգչային այլ տեխնիկայի պակաս<br>• Ինտերակտիվ գրատախտակի բացակայություն<br>• Դպրոցի ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում ՏՀՏ գործիքների էլեկտրոնային գրադարանի բացակայություն :<br><br>ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների , նորագույն սարքավորումների ու նյութատեխնիկական բազայի բացակայություն:<br><br>Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար հագեցված ռեսուրս-կենտրոնի, խելամիտ հարմարեցումների բացակայություն: |

| | |
|---|---|
| փաստաթղթաշրջանառությունը, հաշվապահական հաշվառման վարումը /ՀԾ/ և ֆինանսական հաշվետվությունները կազմումը, գրադարանի դասագրքերի ֆոնդի հաշվառումը և վարումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով: Դպրոցը մեծապես ուշադրության կենտրոնում է պահում համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների ապահով և անվտանգ օգտագործումը, մշտապես կարևորելով սովորողների և աշխատակիցների մեդիագրագիտությունը, պարբերաբար իրականացվում են մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ և քննարկումներ; | |
| **Աշխատակազմի արժևորման ,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն** | |
| Դպրոցն օժանդակում է մանկավարժների պարբերաբար մասնակցությանը մասնագիտական աճն ապահովող սեմինարներին, վերապատրաստումներին՝ կազմակերպած ԿԶՆԱԿ-ի, ՀՄԿ-ի ,նախարարության կողմից երաշխավորված այլ կազմակերպությունների կողմից<br>• Դպրոցը ուղղորդում է ուսուցիչներին՝ մասնակցելու կամավոր ատեստավորմանը՝ աշխատավարձի բարձրացման մոտիվա-ցիայով (4 ուսուցիչ)<br>• Դպրոցն ուղղորդում է ուսուցիչներին՝ մասնակցելու որակավորման տարակարգին (ունենք որակավորման տարակարգ ունեցող 1 ուսուցիչ)<br>• Դպրոցը խրախուսում է այն ուսուցիչներին, ում աշակերտները հաջողություններ են ունենում առարկայական օլիմպիադաներում, տարբեր մրցույթներում (շնորհակալագիր)<br>• Դպրոցը արժևորում է իր ուսուցչին ու նրա աշխատանքը՝ դրական խթան հանդիսանալով ուսուցչի հեղինակության | Կամավոր ատեստավորմանը մասնակցելու պասիվություն<br>• Դպրոցի՝ հաջողություններ ունեցող ուսուցիչներին դրամական պարգևներով խրախուսելու անհնարինություն ֆինանսական վիճակի սղության պատճառով: |

| | |
|---|---|
| բարձրացման նաև ծնողների և սովորողների շրջանում: Համայնքապետարանը գնահատում և արժևորում է ուսուցիչների աշխատանքը: | |
| **Ուսումնական նպատակով կատարված ծախսերը** | |
| 2022թ դպրոցում աշակերտներ և անձնակազմի թվի հարաբերակցությունը 5:1 է: Վերապատրաստումների վրա 2022թ–ին ծախսվել է 196,3դրամ, որը կազմում է բյուջեի 0,36%: Ուսումնական նպատակով կատարված ծախսը ( Գրենական պիտույքներ, ուսումնական պաստառներ և այլն) կազմել է մոտավորապես 457,8դրամ, 0.84%: | Հաշվի առնելով, որ դպրոցի բյուջեի մեծ մասն ուղղվում է աշխատավարձին ու դրան հավասարեցված վճարներին, ինչպես նաև դպրոցի պահպանման ծախսերին (էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման դիմաց վճարներ), ուստի ուսումնական նպատակով կատարված ծախսերը խիստ սահմանափակ են: |

## *Հասպապությունում առկա հիմնախնդիրները*

| Ոլորտ | Հիմնախնդիր |
|---|---|
| ➢ Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան | Դպրոցում ժամանակակից կրթական կարիքները բավարարող ուսումնական միջավայրի անլիարժեքություն (մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման սենյակի, սպորտդահլիճ և այլ բացակայություն): Նյութատեխնիկական բազայի, ժամանակակից սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, լաբորատոր գույքի և նյութի անհագեցվածություն: |
| ➢ Կառավարման և խորհրդակցական մարմիններ | Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության բացակայություն, |

| | |
|---|---|
| | իրենց գործառույթների և լիազորությունների մասին իրազեկվածության ցածր մակարդակ: |
| ➢ Մանկավարժական համակազմ | Ուսուցիչների շարունակական վերապատրաստման և ինքնազարգացման մեխանիզմների բացակայություն: Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորման մասնակցության և տարակարգի համար դիմողների ցածր տոկոս, մրցույթների, նախագծերի մասնակցության բացակայություն: |
| ➢ Աշակերտական համակազմ | Ուսման նկատմամաբ մոտիվացիայի պակաս, ուսման որակի ցածր տոկոս: |
| ➢ Ծնողական համակազմ | Պասիվ են տարբեր նախաձեռնություններում, արտադպրոցական ու արտադասարանական աշխատանքներում: |
| ➢ Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ | Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների պակաս, շարունակ հայտարարվող մրցույթների , դրամաշնորհների մասնակցության բացակայություն; |
| ➢ ՈՒսումնական միջավայր | Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի անլիարժեքություն: |
| Հաստատության տրամադրած կրթության որակը | Օլիմպիադաներում, տարբեր մրցույթներում, մասնակցության պակասի , չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող սաների առկայություն, ԿԱՊԿՈՒ սովորողների շոշափելի առաջընթացի դանդաղ տեմպ , ուսման՝ միջինից ցածր որակ: |
| Տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները | Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման ցածր տոկոս: |

**Նպատակների և խնդիրների սահմանումը:**
**Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, ակնկալվող արդյունքը,արդյունքների գնահատման չափանիշները, պատասխանատուները, գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ռիսկերը:**

## Ոլորտ . 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

**Նպատակը**-ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի ապահովում
**Խնդիրներ .**
.Կատարել ընթացիկ վերանորոգում
. Հարստացնել հաստատության նյութատեխնիկական բազան
.

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխանատուներ | Ժամանակացույց | Ֆինանսական միջոցներն ու անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաները , մարդկային ռեսուրսները | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների ստեղծում և վերազինում ժամանակակից | Հիմնադիր լիազորր մարմին վարչատնտեսական համակարգող, տնօրեն | 2024-2026թ | **Ֆինանսական միջոցներ՝** Պետբյուջե Դրաշնորհային ծրագրեր արտաբյուջետային միջոցներ | ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաներ, ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| սարքավորումն երով | | | **նյութատեխնիկ ական պարագաները**՝ սարքավորումնե ր, նյութեր ,համակրգիչներ **մարդկային ռեսուրս**՝ համակարգող լաբորանտ, | |
| Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների«Սմա րթ» գրատախտակի ներդնում | Հիմնադիր լիազոր մարմին տնօրեն վարչատնտեսական համակարգող | 2024-2026թ | **Ֆինանասական միջոցներ** Պետբյուջե Դրաշնորհային ծրագրեր Արտաբյուջետա յին միջոցներ **նյութատեխնիկ ական պարագաները** համակարգիչ, ինտերնետ կապ **մարդկային ռեսուրս՝** օպերատոր համակրգող,տնօր են | Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով և «Սմարթ»գրատախտ ակով զինված դպրոց: |
| Անգլերենի ուսուցման սենյակի ներդնում՝ անհրաժեշտ ռեսուրսներով | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող | 2024-2026թ | **Ֆինանասական միջոցներ** Պետբյուջե արտաբյուջետայի ն միջոցներ **նյութատեխնիկ ական պարագաները** համակարգիչ սարքավորումներ, դիդակտիկ նյութեր **մարդկային ռեսուրս** անգլերենի ուսուցչուհի | Անգլերենի ուսուցման կահավորված դասասենյակ |
| Մանկավարժահոգե բանական ծառայությունների տրամադրման սենյակի ստեղծում և անհրաժեշտ սարքավորումներով զինում | տնօրեն Վարչատնտեսական համակարգող ուսուցչի օգնական հոգեբան | 2024-2026թ | **Ֆինանասական միջոցներ** Պետբյուջե արտաբյուջետայի ն միջոցներ, **նյութատեխնիկ ական պարագաները** անհրաժեշտ գույք, | Մանկավարժահոգեբ անական ծառայությունների որակյալ տրամադրում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | զարգացնող խաղեր, **մարդկային ռեսուրս** համակարգող, ՏՄԱԿ-ի աշխատակիցներ, ուսուցչի օգնական, հոգեբան | |
| Կահավորել ժամանակակից գրադարան ՝ հարուստ ֆոնդով | տնօրեն Վարչատնտեսական համակարգող խորհրդակցական մարմիններ Գրադարանավար | 2024-2029 | **Ֆինանսական միջոցներ** Պետբյուջե օրենքով չարգելված այլ աղբյուրներ **նյութատեխնիկական պարագաները** ժամանակակից գեղարվեստական և մեթոդական գրականություն, համակարգիչ, **մարդկային ռեսուրս** վարչատնտեսական համակարգող գրադարանավար ուսուցիչներ | Հարուստ ֆոնդով ժամանակակից գրադարան. ավելացված ծրագրային գեղարվեստական գրականություն, QR կոդով գրականություն |
| Սպորտհրապարակի բարեկարգում,ժամանակակից մարզագույքի ձեռքբերում | Լիազոր մարմին Վարչատնտեսական համակարգող տնօրեն Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ | 2024-2029 | **Ֆինանսական միջոցներ** Դպրոցի բյուջե Արտաբյուջետային միջոցներ **նյութատեխնիկական պարագաները** մարզագույք, աշխատանքային պարագաներ **մարդկային ռեսուրսներ** բանվոր, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, սովորողներ, ծնողներ | Բարեկարգ սպորտհրապարակ, անհրաժեշտ պարագաներ |
| Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ | Տնօրեն Վարչատնտեսական համակարգող Ընթացիկ նորոգող և | 2024-2029 | **Ֆինանսական միջոցներ** Դպրոցի բյուջե Արտաբյուջետա | Հարմարավետ և տրամադրող միջավայր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | սպասարկող մասնագետ | | յին միջոցներ **նյութատեխնիկական պարագաները՝** շի նարարական նյութեր, **մարդկային ռեսուրսներ** Բանվոր համակարգող Ծնողներ | |
| | | | | |

## Ակնկալվող արդյունքը.

Դպրոցում ժամանակակից կրթական կարիքները բավարարող ուսումնական միջավայրի ( լաբորարատորիաներ,մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման սենյակ, հարուստ ֆոնդով գրադարան ) ,նյութատեխնիկական բազայի, ժամանակակից սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, լաբորատոր գույքի և նյութի հագեցվածություն:

### Գնահատման չափանիշները

| **Գնահատման ենթակա գործողություն** | **Արդյունավետ** | **Բավարար** | **Ոչ արդյունավետ** |
|---|---|---|---|
| ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների ստեղծում և վերազինում ժամանակակից սարքավորումներով: | Առկա են ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաներ, ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով | Առկա են ԲՏՃՄ որոշ առարկաների լաբորատորիաներ,կա ժամանակակից սարքավորումների և անհրաժեշտ նյութերի պակաս | Չկան ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաներ, ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով |
| Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ «Սմարթ» գրատախտակի ներդնում | Առկա են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, «Սմարթ» գրատախտակ | Առկա են որոշ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ | Չկան ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և «Սմարթ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | » գրատախտակ |
| Անգլերենի ուսուցման սենյակի ներդնում՝ անհրաժեշտ ռեսուրսներով | Առկա է Անգլերենի ուսուցման սենյակ՝ անհրաժեշտ ռեսուրսներով | Առկա է Անգլերենի ուսուցման սենյակ՝ թերի ռեսուրսներով | Անգլերենի ուսուցման սենյակ գոյություն չունի: |
| Մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման սենյակի ստեղծում և անհրաժեշտ սարքավորումներով զինում | Առկա է մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման սենյակ անհրաժեշտ սարքավորումներով | Առկա է մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման սենյակ թերի կահավորված: | Բացակայում է մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման սենյակ՝ անհրաժեշտ սարքավորումներով |
| Կահավորել ժամանակակից գրադարան ՝ հարուստ ֆոնդով | Առկա է ժամանակակից գրադարան ՝ հարուստ ֆոնդով | Առկա է ժամանակակից գրադարան ՝ բավարար ֆոնդով | Բացակայում է կահավորված ժամանակակից գրադարան : |
| Սպորտհրապարակի բարեկարգում,ժամանակակից մարզագույքի ձեռքբերում | Առկա է բարեկարգ սպորտհրապարակ ,ժամանակակից մարզագույքով | Առկա է բարեկարգ սպորտհրապարակ, ժամանակակից մարզագույքի պակաս | Սպորտհրապարակը բարեկարգ չէ: |
| Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ | Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքները կատարվում եմ ըստ պլանավորման, | Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ շեղվում են պլանավորվածից | Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ չեն կատարվում |

## Ռիսկերը

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում՝ կապված արտաքին մարտահրավերների հետ
Արտաբյուջետային միջոցների բացակայություն

**Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ**
Հետևողական աշխատանք տանել արտաբյուջետային միջոցների գոյացման ուղղությամբ:
Դպրոցի ֆինանսավորմանպլանավորում և արդյունավետ կառավարում:

## Ոլորտ 2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ

**Նպատակը**-Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի արժևորում, տեղեկացվածության ապահովում, նրանց միջև կապի ամրապնդում:

**Խնդիրներ**-իրազեկել յուրաքանչյուր մարմնի գործառույթների մասին
Զարգացնել մարմինների միջև կապը

| Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները | Պատասխան ատուներ | Ժամանակա ցույց | Միջոցներ և պարագա ներ | Ակնկալվող արդյունք |
|---|---|---|---|---|
| Իրականացնել սերտ համագործակցություն այդ մարմինների միջև,ապահովել դրանց փոխհամագործակցությունը, իրենց գործառույթների իմացությունը՝սեմինարների, հանդիպումների և այլնի միջոցով: | Տնօրեն ՍԴԱՀ դասղեկներ | 2024-2029 | **Ֆինանսական միջոցներ**՝ չի պահանջ վում **նյութատեխնիկական պարագաները**՝ առանձնացված սենյակներ հանդիպման համար ՏՀՏ գործիքներ **Մարդկային ռեսուրս**՝Խորհրդակցական | Իրազեկ,իրենց գործառույթներներին տեղյակ, համագործակցող խորհրդակցա- կան մարմին- ներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | մարմինների անդամներ | |
| Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը | Տնօրեն դասղեկներ ՍԴԱՀ | 2024-2029 | **Ֆինանսական միջոցներ**՝ չի պահանջ վում **նյութատեխնիկական պարագաները**՝ ՏՀՏ գործիքներ **Մարդկային ռեսուրս** Տնօրեն ՍԴԱՀ Խորհրդակցական մարմինների անդամներ | |
| Ստեղծել շրջանավարտների խորհուրդ | տնօրեն ՄԿԱ համակարհգող ՍԴԱՀ | 2024-2025 | **Ֆինանսական միջոցներ**՝ չի պահանջ վում **նյութատեխնիկական պարագաներ** Համացանց **Մարդկային ռեսուրս** Դպրոցի տարբեր տարիների շրջանավարտներ | Ձևավորված շրջանավարտների խորհուրդ |

## Ակնկալվող արդյունքը

Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև   համագործակցություն, իրենց գործառույթների և լիազորությունների մասին իրազեկվածության բարձր մակարդակ, շրջանավարտների խորհրդի ձևավորում:

## Գնահատման չափանիշները

| **Գնահատման ենթակա գործողություն** | **Արդյունավետ** | **Բավարար** | **Ոչ արդյունավետ** |
|---|---|---|---|
| Իրականացնել սերտ համագործակցություն այդ մարմինների միջև,ապահովել դրանց փոխհամագործակցությունը, իրենց գործառույթների իմացությունը՝սեմինարների, հանդիպումների և այլնի միջոցով: | Իրազեկ,իրենց գործառույթներիներին տեղյակ, համագործակցող խորհրդակցական մարմիններ | Իրազեկ,իրենց գործառույթներիներին տեղյակ, սակայն չհամագործակցող խորհրդակցական մարմիններ | Խորհրդակցական մարմիններ, որոնք չգիտեն իրենց գործառույթները և չեն համագործակցում |
| Ստեղծել շրջանավարտների խորհուրդ | Առկա է ակտիվ, գործնական, շրջանավարտների խորհուրդ | Առկա է շրջանավարտների խորհուրդ | Չկա ձևավորված շրջանավարտների խորհուրդ |

**Ռիսկերը**

Շահագրգիռ կողմերի զբաղվածությամբ պայմանավորված հանդիպումների անհնարինություն

**Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ**

Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում

## Ոլորտ 3 Մանկավարժական համակազմ

**Նպատակ**-Մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործում

## Խնդիրներ

•Բարձրացնել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածությունը

.նպաստել մանկավարժների մասնագիտական շարունակական զարգացմանը

. բարձրացնել աշխատանքային կարգապահությունը

.զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ – ների կիրառման կարողությունները

